ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 162/111 «05» սեպտեմբերի 2019

Ի կատարումն ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» նպատակի 1.3 խնդրի 2-րդ՝ գործողության.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1) Ֆակուլտետների դեկաններին և ուսումնագիտական կենտրոնների տնօրեններին՝ կազմակերպել մագիստրոսի կրթական ծրագրերի մշտադիտարկում (մոնիթորինգ) և գնահատում՝ համաձայն 2019 թ. հունիսի 27-ի գիտխորհրդի թիվ 12/4 որոշմամբ հաստատված՝ «ԵՊՀ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման» կարգի և կից ներկայացված ժամանակացույցի:
2) Որակի ապահովման կենտրոնի տնօրեն Ա. Բուդաղյանին և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտիչյանին՝ ֆակուլտետների և ուսումնագիտական կենտրոնների հետ համատեղ ապահովել մագիստրոսի կրթական ծրագրերի գնահատման ֆոկուս խմբերի կազմավորումը և հետագա աշխատանքները:
3) Սույն հրամանի կատարման ընդհանուր վերահսկողությունը հանձնարարել հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր՝ Է. Ասրիյանին և բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր՝ Ռ. Բարխուդարյանին:
4) Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռեկտորի պաշտոնակատար **Գ. Գ. Գևորգյան**

ԵՊՀ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ) ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Թիվ	Գործողություն	Պատասխանատու/ կատարող	Ժամկետ
1.	Կրթական ծրագրի (ծրագրերի խմբի) ընթացիկ **մոնիթորինգի խմբի** ստեղծում	Ֆակուլտետի դեկան/ կենտրոնի տնօրեն	15-30 սեպտեմբեր 2019թ.
2.	**Ֆոկուս խմբերի** մեթոդով հետազոտության իրագործում	Որակի ապահովման կենտրոն, Սոցիոլոգիայի ֆակուլտետ	01 հոկտեմբեր-30 նոյեմբեր 2019թ.
3.	Ծրագրի **մոնիթորինգի իրականացում և հաշվետվության** կազմում	Մոնիթորինգի խումբ	01 հոկտեմբեր-30 դեկտեմբեր 2019թ.
4.	Մոնիթորինգի հաշվետվության վերաբերյալ համապատասխան **եզրակացության** կազմում և ներկայացում ֆակուլտետի դեկանին/կենտրոնի տնօրենին	Ֆակուլտետի ԳԽ-ի Որակի ապահովման մշտական հանձնաժողով	07-20 հունվար 2020թ.
5.	Ստորաբաժանման ծրագրերի **մոնիթորինգի ամփոփ հաշվետվության** կազմում	Ֆակուլտետի դեկան/ կենտրոնի տնօրեն	21 հունվար-20 փետրվար 2020թ.
6.	Մոնիթորինգի արդյունքների քննարկում ֆակուլտետի ԳԽ-ի կամ կենտրոնի ղեկավարության նիստում և **որոշման կայացում**	Ֆակուլտետի ԳԽ-ի կամ կենտրոնի ղեկավարու-թյան նիստ	21-28 փետրվար 2020թ.
7.	Ստորաբաժանման ծրագրերի **մոնիթորինգի ամփոփ հաշվետվության** ներկայացում Որակի ապահովման կենտրոն	Ֆակուլտետի դեկան/ կենտրոնի տնօրեն	01-10 մարտ 2020թ.
8.	Մոնիթորինգի ամփոփ հաշվետվություն-ների՝ սահմանված չափանիշներին **համապատասխանության ստուգում**	Որակի ապահովման կենտրոն	11 մարտ-10 ապրիլ 2020թ.
9.	ԵՊՀ կրթական ծրագրերի **մոնիթորինգի ընդհանուր զեկույցի** կազմում	Որակի ապահովման կենտրոն	11 ապրիլ-10 մայիս 2020թ.
10.	**Ռիսկային ծրագրերի** վերաբերյալ որոշման կայացում	ԵՊՀ ԳԽ	11-31 մայիս 2020թ.